

և ցեղերու մէջ և համամարդկային շունչ կայ անխիտանութեան՝ ըստ ընկերվարու-
մը կենդանացնելու է ընկերային միջոց- թեան:

ԼՈՐԵՆՍ ԼՈՐԵՆՍ Է ՊԱՐԻՅԱՆՆԵՐԷՆ ՄԷԿԸ ՆԵՐ- (Շարունակելի)

ԽՈՐԷՆ ԳԱՐԵԿԵԱՆ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թագ. 1923, էջ 349)

ԾԲ.

Սուրբիսս եպիսկոպոսէ առ Միթար՝ ցարդ ամենաքիչ թուղթերու հանդիպած էինք Մայրավանքիս ղեւանին մէջ:

Թէ ո՞վ էր այդ եկեղեցականը. — ինձ կը թուէ որ անիկա Պուրսայի նախկին Եպիսկոպոսն ըլլայ, որ « ուղղափոյն և յուսամիտ անձ մ'ի, խողաղասէր, քառական հր-մուտ եկեղեցական ուսմանց և քաջ քարոզիչ »: Ունէր նաև մեծ բարեկամութիւն Եր-Տէր Կոմիտասայ հետ¹, Հաւանօրէն Հոռվմ կը գտնուէր՝ փախչելով արեւելքէն, ինչ-պէս ուրիշներ, նոյն ժամանակի հալածանաց պատճառաւ:

Առաջին անգամն է ուրեմն, որ մեր վաւերաթուղթերու շարքին մէջ կը գետե-ղենք իրմէ հետեւեալ՝ որ կը հայի ծխաական խնդրոյ:

Գիրտպատուելի Միթար Արայի

Ռիսուսաւանդ ողջոյն. ողջ լինի:

Յայտ առնեմ վերագրեալ տէրութեանդ, Հայոց մշտնոց թարգմանեալ որոնեցինք փորձականութան, գտանք ոչ. մէկ քանի տետր գտանք գրեալ է «[պակասութիւն մաշ-տոցին օրինակեցինք]» առաքելի սրբութեանդ, հայիս ինչ բան յաւելորդ են գրեալ ջնջիս, մէկ քանի վարախ թուղտ այլ լուսաւորեալ հոգի Ոսկան Վարդապետի ըստա՞մ, բայ եղեալ Աստուածաշնչին յաւել կամ պակաս բանիւն է գրեալ. խորհրդատուոր մի այլ գտա ձեռագագիր թիւ պատարագի. յառաջ Հոռմա Հայրապետն կու յիշէ յետո կաթողիկոսն. սուրբ տարին մեծ հակառակութիւն եղաւ սանթօֆիցն թէ դուք թիւ պատարագ չունիք. ոմանք ձերայինք կարգաւորաց պատասխանեցին թէ 2 տարի է լէհ ըսկեցին թիւ պատարագ, վերջապէս հաստատեցինք վաղուց Սիւ թիւ պատարագ կայր:

1. Թորոսեան. Վարդ Միթարայ. Վեհապէհ. էջ 221:

խորհրդատուներն տեսած ենք. այժմ գտանք, մեր խօսքն հաստատու եղաւ. խնդրեմ ներուժն շնորհես համարձակութեանս, գիտեմ որ ձանձրութիւն է, ինչպէս անեմ հարկաւոր է յայժմ, փոխթիֆիքալն տվի սանթոֆիցն, հայեցան, այժմ մաշտոցն կուզեն, պատճառը բարութեան է. կասեն թէ հայոց ըոփթը մերձ է լաթիկացոց, գիրքն որ տեսան տեղեկացան որ մերձ չէ, այսչափս բաւ է խոհեմութեանդ, տրուալ Սուրբիաս եպս. յանձնեմ գիտի մաքրափայլ յաղօթս ձեր:

ԹՎին փրկէին ՌԶԼԳ [1734]

յուլիսի օրն առաջին

[Սուրբիաս եպիսկոպոս]

[Հոգովմ]

Յարութիւն արհեսպիսկոպոսին ողջոյն տամ, խնդրեմ որ աղօթէ վասն իմ:

ԾԳ.

Առաջ կը տանի Հ. Էդիա՝ ժամանակակից պատերազմական խնդիրներու շուրջ ունեցած իր մանրամասնութիւնները:

Գերայարգելոյն և Վսեմագունի տեսան տեսան

Միխրայայ Աստուածարամուրեան վարդապետի և Արթայ Հօրն մերոյ

. . . Ի բանակն Ֆրանսոզու կարի թանկութիւն է և վասն այսորիկ և վասն այլոց պատճառաց բազումք ի զինուորացն նոցունց դիմեն առ բանակս սոցին. սոքա ևս ոչ թողուն ի բանակս իւրեանց, այլ զոմանս այսր և անոր ցրունն, և ոմաք ի նոցունց աստ եկեալ են զինուորութիւն առնեն: Բայց բանակն կայսերական ամենուստ կողմանց առաւորութիւն է, նա և են յոյժ առողջք և պատրաստք: Կայսերական կատանայքն, այսինքն մանառք, ոռքք և խովաւք, կարի յոյժ աւերումն տան նոցունց գիւղօրէիցն և զօրացն, և վասն այսոցիկ յոյժ նեղեալք և խռովեալք են այժմ, զի ոչ կարեն զընդդէմ ունիլ կատանայից սոցին, պատճառաւ սրնթացութեան և ուժեղութեան նոցին: Նախ քան զժամանեւն զոյոս այսորիկ լսելոց են այդր զլուր յաղթութեան, զի զօրքն կայսերական յունիսի 17 անցեալ են զշուրն և են այժմ ի հոգս նոցին, և սպասեն զօրացն պոսանտէպուոթին, թէպէտ զոյ այժմ ընդ էվէնեօյին 12 անուանի իշխանք և զինուորք իննսուն հազար և տակաւին օրստօրէ գնան այլք զինուորք և կատանայք: Տանծկացիք այժմ յուսահատաբար մարտնչին զիտելով զայս թէ յետ առնման քաղաքին զմեծագոյն փաստ կրելոց են պատճառաւ ստանիսլաւի: Վերջապէս սոյն քաղաքս ևս հանգոյն թէ՛ վրուզու ի խորին պատժոյ և չքաւորութեան ժամանելոց է պատճառաւ Ֆրանսոզոյին. . . . Աստ այսպէս համբաւեն թէ կարմիր գտակն առեալ է զՊաղտատ, շատ չար խորհուրդ ունէր թուրքի թագաւորն, բայց չեղն Պատճառաւ կարմիր զըտակին. . . .

Գերայարգելութեան ծառայ

Յամի տեսան 1734

Յուլիսի 3

[Պեկիրատ]

Էդիա վարդապետ

ԾԴ.

Ազգային տեսակէտներով բաւական հետաքրքրական նիւթեր կը պարունակէ Հ. Մանուէլի հետեւեալ նամակը:

Ան կը ներկայացնէ միեւնոյն աստեւ նամակագրին մէջ քանի կարևոր ինքնակենսագրական գիծերը՝ օգտակար ծանօթութիւններով:

Գերայարգեցելոյ տեսանդ տեսանդ Արարայի Հայր
յայտարարութիւն

... աստ եղեալն բնափ զախս և զկարասիս իւրեանց բաժանեցին ուր ուրից իմացեալ թէ զուցէ բերդօրայք հաստատք, մինչի ի զլիարկս կանանց ոսկեա փուլէրովք և մարգարտեա զարդարուն քակեցին զբնասն և այնպէս փախուցին. այժմ միայն ա ա (մէկ մէկ) փնէկի որ ծածկոցով փաթաթեալ զզուխս իւրեանց զան յեկեղեցին ահիւ և դոգութեամբ միայն քարոզի և պատարագի... Աղաչալ Պետրոսն ևս այժմ թողեալ զքարաշէն տունն իւր, հանդերձ կնան, ծառայիքն գնացեալ է որպէս թէ ի տեղի ապաստանի, ի սիպին կոչեցեալ քաղաքն, և միայն զծերունի մայր իւր թողեալ է ի տան, և յօրաժամ զթօթալի նօվէլայք լուեալ, ի ահի երկիւղի և ի կասկածալիաց կան զցայք և զցերեկ... Ի կողմանէ աչացն Հ. Ստեփան Բաղձալոյս յոյժ մեծապէս ցաւիմ, և յուսամ թէ էնկսէին եախուն օգտիցէ նմա... Ձցաւալի լուր գրեմ, Հ. Թէոփոսի փեսին՝ սակս զրիգորին որ առ Աստուած փոխեցաւ ի յուլիսի 17ին, և եղև տոյնպէս: Դոյն սապատութիւնն որ վերայ եկեալ էր զնոյն հրաշալի բարձրագոյն հաւսակն, որ կարեմ ասել քան զմեր Հ. Գրիգորի պօյն այլ աւելի բարձրագոյն էր, յորժամ կտրիճն էր նախ քան զամուսնանալն, և յետ ամուսնութեան իբրև զմի ամ յետոյ, նոյն սապատութիւնն որ պատահեալ էր նմա՝ եղեալ էր այնքան կարճ՝ որպէս թէ զնոյն Բոէթին որ ի սուրբ Մարթին... Եւ վստան վկայութեան կենցաղավարելոյս աստ, ոչ միայն զմի գիր, այլ թէ զժ. կամիցիմ՝ յօժարութեամբ տան. և մեծաւ արտասուանօք, ոչ միայն իշխանք, այլ և ռամբուրք, զորոց Աստուծոյ գիտելի թէ որքան օգտութիւնս հասուցեալ եմ, մանաւանդ հիւանդաց և աղքատաց, և սոցին զրուցատրութիւնք միայն բերան առ բերան հազիւ կարեմ մեկնել, և ոչ գրով: Կարծեմ թէ Հայր Գրիգորն ոչ է կարացեալ լաւապէս իմացնել սան Մարթինի դիմացի եղեալ պոյաճուն զայն հողն միայն՝ որ թախանձէ զիս այն բարեկամ ոմն որ աստ է: Միայն այսպէս ասէր ներկարարին, (թէ ասփոր ծաղկամբ ներկ որ բոնեն) և Բ. Գ. օր տօպրակով պահեն և միշտ զշուրի զուրս ածեն, և յետոյ՝ Կողի պէս թօզ կայ նովամ պն տօպրակի մէջ ծնացեալ ասփորն՝ ցանկելով զնոյն հողն ապով չփեն, մանաւանդ զայս խօսքն թող ասէ (յետ ամեւ նեցուն ի իմանի ջրով ևս չփեն) և զայլն ևս գիտեմ, միայն զայն հողի անունն զրիցէ թէ զինչ անուանի, և ոչ այլ ինչ):

Յամի տեառն 1734
օգոստոսի 6

Հ. Էմանուէլ (խուպարեան)
կոնստանդնուպոլիս

ԾԵ.

Այս անգամ Հ. Եղիա՝ բաց ի տեղական քաղաքային լուրերէ՝ մէջ կը բերէ հայ զաւառներու կենանքէն զանազան տեղեկութիւններ, յորս զլիաւորն է Տիգրաւնակներտի մասին զրաժը:

Գերայայտագրեցիւն և վստահութեան տեսան տեսան
Միւսիւրայայ Աստուածարաններու վարչապետի և Արքայ Հօրն մերում

... Քայլաւազուց պատրիարքի քույրն ի տիարպէթըն վասն եղբորն իւրոյ եկն աստ, բայց այժմ ոչ գիտէ, թէ ուր իցէ նա, արդեօք իցէ ի Վէնէտիկ, և կամ ի Հոմ, գրելի է զտոնն ևս, և ևս զկնի բազմաց խօսակցութեանց հարցի ցնա, թէ տիարպէթըր այժմ յորում կացութեան իցէ, նա և սկսաւ ասել [«հիշ սորմայ»] հացին 1 օխան նաւ խապէս 1 ստակ էր ասէ, բայց այժմ 5 փարայ, մօին օխան 8 փարայ. կանայք չունին հրաման ի տանէ իւրեանց ելանել ի դուրս, հագիւ կարեն յամիսն մի անգամ գնալ ի բաղանիս, 20 հազար յէնիշէրի բնակին ի տիարպէթըր, ասուծախն ինքեանք, ասնեն, փարթամըք աղքատացան, և աղքատք բոլորովմբ չքաւորեցան: Մուսուլու գիւզօրէթն ոչնչացան. պաղտատու եղեալ ժողովուրդն, սմանք ի սովու և ոմանք ի ջրոյ մեռան ասէ, և այլն: Յանցելում ասուրն եկն աստ թագաւորական հրաման, զի իւրաքանչիւր քաղաքացի գիր ցորեանն այլոց ոչ վաճառիցէ, այլ իւրաքանչիւր քաղաքացի վաճառեսցէ իւրեանց քաղաքացւոյն: Ասու յայտ է, թէ ի թմշվարու և ի վարատիւն ցորենն ի խրուստիի երկիրն տանելոց են: Թուրքն եթէ կամիցի պատերազմն ասնել ընդ կայսերն, ոչ զայ ի պելկրատ, այլ ի յերկուս յառաջս բաժանելով, ոմանք ի նոցունց ի կողմն խովատիւ գնան և ոմանք ի մաճառու: Թուրքի թագաւորն եթէ կամիցի պատերազմ ասնել ընդգէմ քրիստոնէից, նախապէս ոչ ասնէ ընդ սմա, այսինքն ընդ կայսերն, այլ ընդգէմ մօսկֆին, ըստ որում ոմանք աստանօր ի մեծամեծաց այսպէս տրաւ մաբանեն: Սրգա ի կողմն խովա[տ]իէն շատ ազգեր ունին: Աստ հարկաւորապէս թալաւ կանայ հացն և միսն, զի ըստ մեծի մասին քաղաքիս միսն և ալիւրն յայլմէ երկրէ զայր աստ, զի պէկրատու հողն թմշվարու պէս չէ ... :

Յամի տեսան 1734
նոյեմբերի 4

[Պելկրատ]

(Շարունակիլ)

Գերայայտութեան քուս
նուաստագրոյն ծառայ
Ելիւս վարչապետ

Հ. Ղ. ՏԱՅԱՆ

* Դէպ ի մահ ապաստանիլը տկարութիւն և եսասիրութիւն է. ո՛հ, հազար անգամ ապրիլ՝ առաջնորդելու, միւթթարելու համար և տեսնելու թէ ի՞նչ է մահը: Ապրիլը ճանչնալ և և ճանչնալը կը նշանակէ կանաւալ:

Բան մը, մանաւանդ թէ շատ բան կըրնանք ընել... Եւ սակայն կեանքը մեր բաղձանքներէն առաջինն է, թէ և մեզ ցաւեր առթէ, արցունքներ պահանջէ, մարտիրոսութիւններու ենթարկէ...

Ատեօք կեանքը կըրտալ քիչերու համար պտերութիւն մը դարձաւ, և հիմայ ծանրութիւն ու խաչ մը շատերու... Կարող է:

* Դրամը խիստ անհաւասար արժէք մ'ունի. ահագին է այն՝ եթէ մերձաւորին օգնելու կը ծառայեցնենք. զրեթէ աննշան՝ եթէ լոկ մեր ըմհանդրին համար է:

* Այն անձինք որ լաւ ընդունելութիւն մը կ'ընեն քեզ, ամենէն աւելի հետդ բարեկամանալու միշտ պատրաստական ենք չեն: Ամբիջական սեղմում մը ձեռքի՝ զոր կ'ընեն անոնք՝ միշտ միկնակէտ մը չէ, այլ աւելի վերջակէտ մը:

* Ընդհանրապէս երբ մարդ մը կը ճանչնայ իր անձնական թերութիւնները՝ դեռ անուշ պատրանքով մը կը համարի թէ անոնք աւելի տանելի են քան մերձաւորները:

